«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Բանահյուսության ուսուցումը տարրական դասարաններում**

ՀԵՂԻՆԱԿ **Սուսաննա Մինասյան**

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ Դասվար

ՂԵԿԱՎԱՐ Արմենուհի Մելքոնյան

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Հայ բանահյուսություն---------- 5

Հեքիաթ---------- 7

Դասի պլան ---------- 9

Առակ---------- 15

Առած-ասացվածք----------17

Հանելուկ----------19

Շուտասելուկ----------21

Եզրակացություն----------22

Օգտագործված գրականություն ----------23

Ներածություն

Շատ կարևորում եմ Ժողովրդական բանահյուսությունը, որը ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը, սերնդեսերունդ փոխանցվելով, բյուրեղացել, հասել է մինչև մեր օրերը՝ ձևավորելով ու ամբողջացնելով այն կրողների ազգային դիմագիծը և հարուստ նյութ հանդիսանալով ինչպես ժամանակակից գեղարվեստական գրականության, այնպես էլ պատմագրության և արվեստի մյուս ճյուղերի զարգացման համար: Բանահյուսությունը գրավոր գրականությունից տարբերվում է չորս հիմնական տարրերով՝ բանավոր գոյությամբ (բանահյուսական ստեղծագործությունները ապրում են ժողովրդի հիշողության մեջ և փոխանցվում են բանավոր՝ բերնեբերան), հանրային՝ կոլեկտիվ բնույթով (բանահյուսական ստեղծագործության ձևավորմանն ու տարածմանը մասնակցում է ժողովուրդը), տարբերակների առկայությամբ (բանահյուսության ցանկացած տեսակ, ի տարբերություն հեղինակայինի, ունի բազում տարբերակներ. ինչքան՝ ասացող, այնքան՝ տարբերակ) միաձուլությամբ՝ սինկրետիզմով (բանահյուսական մի շարք տեսակներ իրենց մեջ ներառում են տարատեսակ սեռեր ու ժանրեր՝ համադրելով թե՛ թատերականը (դրամատիկական, ողբերգական, կատակերգական, դիմախաղ, մարմնի շարժումներ), թե՛ ազգագրական-ծիսականը (հարսանեկան, թաղման, ազգային տոների ու խաղերի դրսևորումներ), թե՛ երաժշտարվեստի ու պարարվեստի արտացոլանքները, և թե՛ բանարվեստի զանազան տեսակների կիրառությունները):

Հիմնահարցի արդիականությունը

Մանկական գրականության զարգացման հիմքում ընկած է ժողովրդական գեղարվեստական խոսքը, նրա բանահյուսությունը , բանահյուսության բազմահարուստ ձևերը՝ ժողովրդական երկեր, հեքիաթներ, առակներ, առած-ասացվածքներ և այլ բնույթի բանավոր ստեղծագործություններ, որոնք դարեդար ուղեկցել են մանուկներին և դաստիարակել նրանց: Մանկական գրականության առանձնահատկություններն են ՝ մատչելիությունը, կրկնությունը: Ժողովրդական բանահյուսության ուսուցումը լավագույն միջոցներից է երեխաներին

իրենց արմատներին ծանոթացնելու, հայեցի մտածողություն ու դաստիարակություն սերմանելու համար: Տարրական դասարանների դասգրքերում ընդգրկված են առած-ասասցվածքներ, առակներ, սուտասելուկներ, շուտասելուկներ, խառնագրեր, հեքիաթներ, թևավոր խոսքեր, խնդուկներ, խաղիկ-տաղիկներ, օրհնանքներ, որոնք ուսուցումը դարձնում են ավելի զվարթ ու հետաքրքրաշարժ:

Հետազոտության նպատակները՝

- Զարգացնել տրամաբանությունը,մտածողությունը, երևակայությունը:
- Զևավորել բնությունն ու բնության մեջ եղած բազմապիսի առարկաներն ու երևույթները դիտելու կարողություն:
- Զևավորել հայեցի դաստիարակություն,վարք ու բարք և բարոյական հատկանիշներ:

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումնասիրել հետազոտության թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականություն, դիտարկել հմնական սկզբունքները
- Ուսուցումը դարձնել ավելի զվարթ և հետաքրքրաշարժ
- Դիտարկել մեր աշխատանքի ընթացքում իրականցրած քայլերը և կատարել վերլուծություն:

Հայ բանահյուսություն

Հայ բանահյուսությունն աշխարհի ամենահարուստ, հնագույն բանավոր ստեղծագործություններից մեկն է: Նրա հեղինակը հայ ժողովուրդն է : Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդն ստեղծել է գեղարվեստական խոսքի կատարյալ նմուշներ՝ հեքիաթներ, առասպելներ, հանելուկներ, առակներ, առածներ, շուտասելուկներ, ավանդություններ, ասացվածքներ, աշխատանքային երգեր, որոնք էական նշանակություն են ունեցել երեխաների բարոյական դաստիարակության ասպարեզում:

Ուսումնասիրել հայ ժողովրդի բանահյուսությունը, նշանակում է ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը:Հայ բանահյուսության նմուշները արժանացել են Խաչատուր Աբովյանի, Ղևոնդ Ալիշանի , Հովհաննես Թումանյանի , Ղազարոս Աղայանի , Ավետիք Իսահակյանի և այլ նշանանոր մտավորականների բարձր գնահատականին: Պատահական չէ , որ Ղազարոս Աղայանը դրանք համարել է ոչ միայն հայեցի դաստիարակության, այլև՝ երեխայի լեզվի մարզման և ազգային մտածողության կերտման միջոց: Տարրական դասարաններում դրանց հմտալից կիրառումն օժանդակում է կրթա-դաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Տարրական դասարաններում բանահյուսության ուսուցումը նպատակ ունի աշակերտներին գիտելիքներ հաղորդել ժողովրդական բանահյուսության արժեքավոր նմուշների, դրանց պատմական զարգացման փուլերի, գրական և բարբառային տարբերակների վերաբերյալ: Ժողովրդական բանահուսության և մանկական գրականության տարաբնույթ ժանրերի ընթերցումների միջոցով երեխաների գրական ճաշակը և խոսքի մշակույթը զարգանում է:

Հայ ժողովրդական բանահյուսության ժանրեր

1. **Առասպելները և առասպելական զրույցները** ՝ <<Հայկ և Բել>>, <<Արա Գեղեցիկ և Շամիրամ>>, <<Տիգրան և Աժդահակ>>, <<Վահագնի ծնունդը>>, հայոց հեթանոսական դացիրանը, հայ հին աստվածներ, առասպելական զրույցներ,

հայոց դիցարանի աստվածների մասին – Մովսես Խորենացի<<Հայոց պատմություն>>:

2. **Ժողովրդական հերոսավեպ՝** էպոս <<Սասունցի Դավիթ>> կամ <<Սասնա ծռեր>> էպոսը ՝ որպես հայ ժողովրդի կյանքի հանրագիտարան , էպիկական ժանրի ստեղծագործություն է: Էպոսի ճյուղերը , հերոսները, պատմական և առասպելական շերտերը, գեղարվեստական արտահայտչականության հարուստ և բազմազան միջոցները՝ կոմպոզիցիա, սյուժեներ, կոնֆլիկտներ, գեղարվեստական արժեքներ են: Էպոսի և մանկական գրականության կապը ՝ Հովհաննես Թումանյանի <<Սասունցի Դավիթ>> պոեմն է:
3. **Հեքիաթներ՝** հրաշապատում և իրապատում տեսակներով, հեքիաթային հատուկ անիրական հնարքներ, երևակայական կերպարներ ու իրադարձություններ, հեքիա ժանրի սերտ կապը ժողովրդական վեհ իդիալների և գաղափարների հետ:
4. **Ավանդույթները և զրույցները՝** որպես իրական և հավաստի փոքր ծավալի պատմություններ ազգային կյանքի վաղուց անցած ու հուշ դարձած դեպքերի ու դեմքերի շուրջ, դրանց ճանաչողական ու գեղարվեստական բարձր արժեքը:
5. **Առակները** ՝ կոմպոզիցիոն առանձնահատկությունները, կառուցվածքը, բարոյախոսական ուղղվածությունը:
6. **Անեկդոտներ՝** որպես մեր օրերի ժողովրդական բանահյուսության ամենակենդանի ժանր:
7. **Առած ասացվածքները՝** որպես ուղղակի և փոխաբերական իմաստ ունեցող կարճ , պատկերավոր ասույթներ, դատողություններ:
8. **Հանելուկները՝** ծողովրդի տրամաբանական ընդունակություններն ու մտքը խթանող ու զարգացնող էպիկական ժանրի տեսակ:

Քնարական ժանրի ստեղծագործություններ

ա. Աշխատանքային երգեր

բ. Պանդխտության երգեր

գ. Խաղիկներ:

Կենցաղային ծիսական քնարերգություն

ա. Հարսանեկան երգեր

բ. Պարերգեր

գ. Օրորոցայիններ և մանկական խաղերգեր:

Հայ ժողովրդական բանահյուսությունը աշխարհի ամենահարուստ հնագույն բանավոր ստեղծագործությունն է :

Հեքիաթ

Հայ մանկական գրականության մեջ առանձնահատուկ դեր ունեն հեքիաթները, որոնց միջոցով երեխաների մեջ դաստիարակվել են հայրենասիրություն, ազնվություն, բարություն, աշխատասիրություն, ինչպես նաև ծուլությունը, չարությունը և վախկոտությունը խստորեն դատապարտելու պատրաստակամություն: Հեքիաթն այսօր էլ շարունակում է մնալ կրտսեր դպրոցականների ամենասիրելի և ընդունելի գրական ժանրերից մեկը: Հայ գրողներից շատերին հետաքրքրել են ժողովրդական հեքիաթները : Նրանց կողմից կատարված մի շարք մշակումները մանկական գրականությունը հարստացնում են ինքնատիպ և դաստիարակող ստեղծագործություններով: Հ. Թումանյանի հեքիաթները / <<Գառնիկ ախպեր>>, <<Չարի վերջը>>, <<ՈՒլիկը>>, <<Կիկոսի մահը>>, <<Ծիտը>>…/ իրենց բարոյախրատական ներգործող ուժով դաստիարակել ու դաստիարակում են հայ երեխաներին :

Աթաբեկ Խնկոյանի կերպավորած կենդանական հեքիաթներն ունեն ազգային կոլորիտ: Դրանց աշխարհը հայկական է, կենցաղը՝ նույնպես հայկական: Կենդանիները բնորոշ են հայկական բնաշխարհին՝ կռունկ, աքլոր, աղվես, արջ/<<Կռունկն ու աղվեսը>>, <<Գյուղացին ու արջը>>, <<Աքլորն ու աղվեսը>> և այլն/:

Այս հեքիաթների ունկնդրումը երեխաների մեջ ծնում է ազգասիրական զգացումներ, սեր հայրենի բնաշխարհի նկատմամբ:

Հեքիաթը լինում է երեք տեսակ՝ հրաշապատում, իրապատում, կենցաղային-երգիծական:

Երեխաները պետք է կարողանանան միմյանցից տարբերել հրաշապատում՝ կախարդական, իրապատում և կենդանական հեքիաթները , զանազանել դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Հեքիաթը՝ որպես գրական առանձին տեսակ, ունի գեղարվեստական բնորոշ առանձնահատկություններ:Այն հարուստ է ժողովրդական արտահայտություններով, թևավոր խոսքերով, առած-ասացվածքներով, ունի բնորոշ զկիզբ՝ <<Լինում է, չի լինում>>,<<Կար, չկար>>և ավարտ՝ <<Երկնքից երեք խնձոր ընկավ>>, <<Չարն այնտեղ, բարին՝ այստեղ>>:

Անհրաժեշտ է , որ սովորողն իմանա, թէ ինչու են հատկապես այդ արտահայտություններն օգտագործվում որպես սկիզբ և ավարտ; Բանն այն է, որ այդ ժամանակը հայտնի է և անհայտ: Ադպիսի բան , իրոք, եղել է , կամ չի եղել: Բայց դա չի նշանակում, թէ հեքիաթում արտահայտված գաղափարները սուտ են: Հարկավոր է այնպես անել, որ սովորողը հավատա հեքիաթի բուն գաղափարին ՝ բարու և չարի հավերժական պայքարին:

Երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում , այլև առօրյա կյանքում:Հեքիաթի վերջում բարու հաղթանակը ոգևորում է երեխային՝ բարի գործեր կատարելու և հասկանալու , որ հաղթանակի բերկրանքը հեշտ չի տրվում: Հերոսներն անցնում են բազում փորձությունների միջով, անհաղթահարելի արգելքներ, և ամենակարևորը, բարին մենակ չի գործում, նրան օգնում են հրաշագործ ուժերը:

Անփոխարինելի է հեքիաթների դերը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության , ստեղծագործական երևակայության զարգացման առումով: Մանկական ստեղծագործություններ ընտրելիս անպայման անհրաժեշտ է հաշվի առնել դրանց գրական-գեղարվեստական արժանիքներն ու

առանձնահատկությունները:Միայն այս դեպքում տվյալ ստեղծագործությունը երեխայի համար պետք է լինի զարմանալի, հրաշալի, հեքիաթային, ոչ հասարակ: Երեխաների մեջ ազնվություն և ճշմարտախոսություն, բարոյական որակներ ձևավորելու նպատակով անհրաժեշտ է նրանց ուշադրությունը ներկայացնել և՛ դրական, և՛ բացասական գործող անձեր պատկերող գեղարվեստական ստեղծագործություններ : Պետք է հասնել այն բանին , որ երեխան կարողանա հասկանալ և գնահատել հեքիաթի էությունը, փորձի տեսնել իրական կյանքում հեքիաթների հերոսներին, տարբերել բարին ու չարը , դառնալ բարու կրողը և միշտ հավատալ նրա հաղթանակին:

Դասի պլան

Բանահյուսության նմուշ-օրինակներ

<<Երեք աղջիկների հեքիաթը>> /Ժողովրդական/

Առարկան՝ մայրենի

Դասարանը՝ II

Դասի թեման՝ <<Երեք աղջիկների հեքիաթը>>

Դասի տիպը՝ թեմայի ամփոփում

Դասի նպատակը

-Ամրակայել հասկանալով կարդալու կարողությունը:

-Ամրակայել բնագրի շարունակությունը գուշակելու կարողությունը :

-Խորացնել դատողություններ և եզրակացություններ անելու կարողությունները:

-Խորացնել տեսածը , լսածը խոսքով վերարտադրելու կարողությունները:

-Մեկնաբանել դարձվածքների ուղիղ և փոխաբերական իմաստները:

-Կատարելագործել հորինելու կարողությունը:

Վերջնարդյունքներ

-Մտքեր արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ:

-Տարբերի ժողովրդական բանահյուսության նմուշները:

-Համապատասխան խոսքային իրավիճակներում զարգացնի ազատ ինքնաարտահայտման կարողություններ:

-Վերլուծի բնագիրը և դատողություններ անել հեքիաթում ծավալվող հիմնական գործողությունների մասին:

-Հեքիաթի միջոցով մշակի վարքի չափանիշներ:

-Ամրակայի գոյականի մասին ունեցած գիտելիքները:

Խաչվող հասկացություններ

- Օրինաչափություն
- Համակարգ և մոդել
- Կառուցվածք և գործառույթ
- Անհատական և մշակութային արժեհամակարգ:

Միջառարկայական կապեր՝ մայրենի, երաժշտություն, կերպարվեստ:

Դասի կահավորումը

-Թեմայի ուսուցման ընթացքում հեքիաթի տարբեր պահերը ներկայացնող նկարներ

-Դասարանում ստեղծված <<Առածները քանդվել են>> վահանակը

-Պաստառներ /ասույթներ/

Գնահատում՝ ձևավորող,հայտորոշիչ:

Դասի ընթացքը

Խթանման փուլում աշակերտների ուշադրությունը կենտրոնացվում է ժողովրդական բանահյուսության վրա՝ հեքիաթ, առակ, էպոս, առած, ասացվածք, շուտասելուկ, սուտասելուկ, հանեուկ, խաղիկ, տաղիկ, երգեր, պարերգեր, օրորոցային երգեր և այլն : Անհրաժեշտ է հիմնավորել, թէ ինչ նպատակով է ստեղծվել ժողովրդական բանահյուսությունը, ինչպես և ում շնորհիվ է այն հասել մինչև մեր օրերը: Հարկ է նշել նաև խաղիկների , տաղիկների, հանելուկների ծագման մասին, որոնք ստեղծվել են մարդկանց զբաղեցնելու նպատակով:

Իմաստի ընկալման փուլ

Հարցերի միջոցով վերլուծում ենք հեքիաթը: Աշակերտները ներկայացնում են իրենց ստեղծած՝ հանելուկներ պատկերող նկարները: Այնուհետև նրանք դերախաղով պատմում են հեքիաթը՝ օգտագործելով ժողովրդական բանահյուսության նմուշներից / առած,տաղիկ-խաղիկ,սուտասելու, շուտասելուկ, հաշվելուկ, օրորոցային.

Տաղիկ-խաղիկ

Հարի, հարի, խնոցի,

Մեջդ բարի, խնոցի,

Ունկդ բաարրակ, խնոցի,

Մեջդ կարագ, խնոցի:

Առած

Ուս ուսի որ տանք,

Սարեր շուռ կտանք:

Սուտասելուկ

Ես ունեմ մի հայելի,

Արմանք-զարմանք նայելի,

Երբ նայում եմ ես նրան,

Գլխիվայր է ամեն բան.

Պիտի կանգնեմ գլխի վրա,

Որ ամեն բան իր տեղը գա:

Շուտասելուկ

Երբ եկան այցի, ասացին առանձին՝

Առանց ձի նազիրը նման է այծի:

Օրորոցային

Օրո՜ր, Օրո՜ր, իմ սիրունիկ,

Օրո՜ր ասեմ՝ դու նանա,

Երկար ապրես կարմիր օրեր,

Կարմիր օրեր ունենաս,

Օրո՜ր, Օրո՜ր, իմ անուշիկ,

Օրո՜ր ասեմ՝ դու նանա:

Հաշվելուկ

Տուն, տուն, երկու տուն,

Երկու տանը՝ երկու շուն,

Երկու շանը՝ երկու բույն,

Երկու բնին երկու դուռ,

Մեկը՝ ուղիղ, մեկը՝ ծուռ:

Գրատախտակին ամրացված է վահանակ՝ <<Առածները քանդվել են>>: Դասին հավաքում ենք քանդված առածները.

Ուշ լինի, նուշ լինի:

Ով աշխատի նա կուտի:

Ստի ոտքերը կարճ են:

Թթու է՝ թան չէ, ամեն մարդու բան չէ:

Կշռադատման փուլ

Օգտագործում ենք մտագրոհի մեթոդը: Գրատախտակին գծում են շրջան, բառը: Երեխաները հերթով մոտենում են , ճառագայթ գծում և գրում դրան առնչվող նորանոր բառեր.

Հեքիաթ-հրաշք, չար,բարի, թագավոր, լինում է, չի լինում, կախարդ, հրեշ, թզուկ…

Այնուհետև կատարում ենք բառային աշխատանք, աշակերտները հեքիաթից դուրս են բերում ով, ովքեր, ինչ, ինչեր հարցերին պատասխանող բառեր և ամրապնդում գոյականի մասին ունեցած գիտելիքները.

Ով- թագավոր, վեզիր, գյուղացի

Ովքեր- աղջիկներ քույրեր

Ինչ- արտ,կարաս,մորուք,փոս

Ինչեր- ջրհորներ, տաղիկներ, շուտասելուկներ:

Կազմում ենք բառակապակցություններ՝ հեքիաթ բառով.

Հեքիաթ- կախարդական, հրաշապատում, իրապատում, երկար, հետաքրքիր, ուսուցանող, սիրելի…

Սովորողները պատասխանում են հետևյալ հարցերին.

Ինչպես են սկսվում հեքիաթները:

Ինչ են սովորեցնում հեքիաթները:

Սովորաբար ինչպես են ավարտվում հեքիաթները:

Դասի վերջում, ինչպես հեքիաթում, << երկնքից երեք խնձոր է ընկնում>> և բաժանվում երեխաներին:

Անդրադարձ-<<Բոնոյի գլխարկ>> մեթոդ:

Գնահատվում են բոլոր աշակերտները:

Տնային հանձնարարություն՝ նկարազարդել հեքիաթից մի պատկեր:

Առակ

Հայ բանահյուսության ամենահնագույն տեսակներից մեկը առակն է, որն աճել է կենդանիների մասին /կենդանական էպոսի/ հիման վրա: Նրա կոմպոզիցիոն առանձնահատկությունները հեռավոր ժամանակներից մինչև այսօր գրեթե չեն փոխվել:

Առակը բարոյախոսական, փոխաբերական փոքրծավալի պատմություն է մարդկանց մասին, նրանց արատների և թերությունների մասին: Առակների մեծագույն մասումցուցադրվող մարդկանց արատներն ու թերությունները հանդես են գալիս գերազանցապես կենդանիների, թռչունների, ձկների կերպարներում, նրանցից յուրաքանչյուրին բնորոշ գործողությունների միջոցով: Առակների գործող անձիք միշտ դրվում են մտացածին դրությունների ու հանգամանքների մեջ: Նրանց մեջ գործողը, ըստ էության , մարդն է՝ այս կամ այն կենդանու կերպարանքով:

Առակի մեջ ժողովուրդը պարսավում, ծաղրում, դատապարտում, ծաղրանքի է ենթարկում բոլոր նրանց, ովքեր իրենց աղվեսային խորամակնությամբ ու քծնանքով, գայլային ագահությամբ ու դաժանությամբ, իշային հիմարությամբ ու բթությամբ օտար ու թշնամի են աշխատող մարդուն:

Առակը տարրական դասարանների դասագրքերում ամենից հաճախ հանդիպող ստեղծագործություններից է, որովհետև այսօր էլ պահպանվում են ուսուցողական տեսակետից դրա կրթական ու դաստիարակչական դերն ու արժեքը:

Առակների հերոսները՝ կենդանիները, և բույսերը խոսում, գործում և դատողություններ են անում մարդկային լեզվով: Հենց այս այլաբանության կամ փոխաբերության բացահայտումն էլ առակի ավանդման հիմնական առանձնահատկությունն է : Առակների հերոսներն ունեն բնավորության խտացված գծեր, նրանց արարքները մատչելի են երեխաներին, որովհետև վերցված են կյանքից:Այնտեղ գովաբանում, խրախուսվում են լավն ու բարին, գեղեցիկնյ ու մարդկայինը ՝ ջանասիրություն, ազնվություն, քաջություն, հայրենասիրություն, և ընդհակառակը, ծաղրի ենթարկվում ու դատապարտվում վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, ծուլությունը, վախկոտությունը, դավաճանությունը:

Առակի ուսուցումը տարրական դասարաններում ունի մի շարք առանձնահատկություններ. Ուսուցանվող առակը բաժանվում է տրամաբանական ամբողջություններկայացնող հատվածների,որոնք ընթերցվում են, և զուգահեռաբար կատարվում է բառային աշխատանք:Վերլուծվում է յուրաքանչյուր հատված: դրանց համար ընտրվում են համապատասխան վերնագրեր, և կազմվում են հարցաշարեր: Սովորողները բնութագրում են կերպարները և նրանց արարքների շուրջ դատողություններ ու եզրահանգումներ կատարում: Առակների կից հարցերն ու առաջադրանքները երեխաներին օգնում են հասկանալու ոչ միայն այն, ինչը հեղինակը բառերով է արտահայտել , այլև այն, ինչ թաքնված է տողերի տակ /ենթատեկստում/: Առակի բարոյախրատական իմաստն ամրակայվում է համապատասխան առածներով ու ասացվածքներով: Կատարվում են առակի բովանդակության վերլուծություն , հերոսների բնավորության գծերի բացահայտում՝ նրանց արարքների հիման վրա, սեփական վերաբերմունքի արտահայտում նրանց նկատմամբ, առակի ժանրային առանձնահատկությունների

ուսունասիրում/հերոսներ, բարոյախրատական մտքերը, ծիծաղաշարժ մտքերը, հեղինակի հեգնանքը և այլն/:

Առակի ուուսցման արդյունքում աշակերտները պետք է իմանան.

- Ինչով է առակը տարբերվում մյուս ժանրերից

-Գործողությունների զարգացումը, բարոյախոսությունը, վերջնաբանը

-հասկանալ բարոյախոսության իմաստը և այլաբանության դերը

- Առանձնացնել առակի կառուցվածքային տարերը

- Նկատել հեղինակի ծաղրը՝ առակի տվյալ իրադրության մեջ և օգտագործված բառապաշարում

-Համեմատել առակի հերոսներին, գտնել նմանություններ և տարբերություններ նրանց արարքներում, արտաքին տեքստում, բնավորության և լեզվի մեջ

-Պատկերացնել իրենց՝ որպես առակի գործող անձիք և այն իրավիճակներում , ուր տվյալ առակի հերոսները հայտնվել են

- Օգտագործել տարբեր առակների համեմատման և հակադրման հնարներ

Վերլուծությունից հետո երեխաներն առակն ընթերցում են դերերով, սովորում անգիր և բեմականացնում այն: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում արտահայտիչ ընթերցանությանը:

Առած-ասացվածք

Առածներն ու ասացվածքները հայ ժողովրդական բանահյուսության մարգարիտներն են : Առածները ուղղակի և փոխաբերական իմաստ ունեցող կարճ, պատկերավոր ասույթներն ու դատողություններն են: Կյանքի յուրաքանչյուր երևույթ նրանցում բնութագրվում է սրամտորեն և կատարյալ ամբողջականությամբ: Նրանց մեջ գործածված բառերը քիչ են, իսկ մտքերը՝ շատ:

Իրենց ժանրային հատկանիշներով առածներին խիստ մոտ են ասացվածքները: Սրանք առածներից տարբերվում են նրանով, որ ուղղակի խոսքեր են և գրեթե միշտ գործածվում են առանց փոխաբերական իմաստի: Նրանք առանձնապես կարևոր դեր ունեն դասիարակչական տեսանկյունից: Օրինակ՝ դասի ժամանակ շատախոս երեխաներին նախատելու համար, առանց նրանց ինքնասիրությունը վիրավորելու կարելի է օգտագործել հետևյալ ասացվածքը.

Մեկ խոսիր՝ տասը լսիր:

Ցատ իմացիր՝ քիչ խոսիր:

Լռությունը ոսկի է:

Խոսելը լավ է, լռելն՝ ավելի:

Ավելի լավ՝ օգտվիր ականջներից, քան լեզվից:

Փակ բերանը ճանճ չի մտնի:

Վաղ հասակից երեխաների մեջ պետք է դաստիարակել հոգատար վերաբերմունք ընտանիքի մեծերի՝ տատիկի, պապիկի և մյուսների նկատմամբ: Այս առումով կարելի է օգտագործել հետևյալ ասացվածքները.

Մեծին լսողի ոտքը քարին չի դիպչի:

Ջուրը փոքրին, խոսքը՝ մեծին:

Հարկավոր է վաղ հասակից երեղային սովորեցնել աշխատել, սիրել ու գնահատել աշխատանքը, կատարել մեծերի հանձնարարությունները, հասկանալ, որ աշխատանքի միջոցով կարելի է հասնել ցանկալի արդյունքի: Այդ տեսակետից պետք է օգտագործել հետևյալ ասացվածքները.

Ով աշխատի նա կուտի:

Այսօրվա գործը վաղվան չեն թողնի:

Ծույլի համար ամեն օր կիրակի է:

Ուսուցիչը պետք է ընտրի այնպիսի առածներ, որոնք մատչելի ու հասկանալի են երեխաներին: Բանահյուսության ստեղծագործություններն ապրում են ժողովրդի մեջ և փոխանցվում են բանավոր ՝ բերնեբերան:Այստեղ կարևորում եմ բարբառների դերը առավել ևս գրաճանաչության շրջանում, որովհետև առաջին դասարանում սովորողը ընտանիքից , համայնքից լսել և խոսում է բարբառով:Երեխան բառապատկերը ընկալում է իր արտասանած ձևով: Հաճախակի և սիրով են երեխաները իրենց համայնքի բարբառով ներկայացնում հեքիաթներ, հանելուկներ , խաղիկներ, առած-ասացվածքներ, նույնիսկ հնչյուններ են առանձնացնում, որոնք չեն հնչում գրական խոսքում:

Առած-ասացվածք՝

Արվեստը մէ կըդոր հած է: (Արծափի բարբառ):

Հանելուկ

Հանելուկը դժվար լուծելի հարց է, որը մեծ մասամբ տրվում է փոխաբերության ձևով: Այն որևէ առարկայի, երևույթի փոխաբերական պատկերումն է՝ հիմնված լուծելի առարկայի և հանելուկում նրան փոխարինող առարկայի հատկանիշների նմանության վրա: Հանելուկները լայնորեն օգտագործվել են բանահյուսության մի շարք ժանրերում՝ հեքիաթներում, վիճակի կամ ջանգյուլումի և հարսանեկան երգերում:

Հանելուկները մեկտողանի, երկտողանի , քառատող ու ավելի տողերով չափածո և հանգավոր ստեղծագործություններ են: Կան նաև արձակ անհանգ հանելուկներ և միշտ սկսվում են հարցով՝ << Էն ինչն է ինչը>>, <<Էն ինչն է որ>> , չեղած դեպքում էլ այն գիտակցվում է մտքով: Այդ է պատճառը, որ նրանք համարվում են հարցականով կարճ ու սեղմ մանրապատումներ:

Հանելուկների գուշակումը նպաստում է երեխաների երևակայության, մտածողության, մրցակցության և արագ կողմնորոշվելու հատկությունների

զարգացմանը: Ճիշտ կռահումը մեծ ուրախություն է պատճառում երեխային: Բերենք հանելուկի մի քանի օրինակներ.

Այն որ ծառը բարձր է փղից,

Իսկ պտուղը՝ փոքր է ձվից:

/ընկուզենի/

Դաշտի զարդն է, գույնը ալ,

Ամեն թշին՝ մի սև խալ:

/կակաչ/

Երբ դիմացն ես կանգնում,

Երկու մարդ ես դու դառնում:

/հայելի/

Բազում ատամներ ունի,

Բայց ուտելու պահանջ չունի:

/սղոց/

Դասի ժամանակ հանելուկն օգտագործվում է թե՛ որպես նոր նյութի հաղորդման միջոց, թե՛ որպես աշակերտների ձեռք բերած գիտելիքների ամփոփման, թե՛ որպես դասին հետաքրքրաշարժություն հաղորդող հնար: հանելուկի միջոցով կարելի է հաղորդել այնպիսի գիտելիքներ, ինչպիսիք բառի ուղիղ և փոխաբերական իմաստներն են, բառիմաստի բացատրությունը, համեմատումը, տարաբնույթ առարկաների և երևույթների մասին երեխաներին նոր տեղեկություններ հաղորդելը, խոսքի մասերի վերաբերյալ գործնական գիտելիքների յուրացումը և այլն : Մինչև հանելուկի պատասխանի գուշակման կարողության մշակելը կարելի է կազմակերպել<<Հրաշալի արկղ>> խաղը: << Հրաշալի աչկղը>> ստվարաթղթից

պատրաստված մի տուփ է, որը զարդարված է հեքիաթային զվարճալի գույներով: Նրա մեջ ուսուցիչը լցնում է տարբեր առարկաներ՝ ըստ նպատակի:Ուսուցիչը ձեռքը մտցնում է անկղի մեջ և հանելուկային ոճով ասում է. <<Իմ ձեռքում գտնվում է մի առարկա, որը կլոր է, կոշտ կեղևով, որի մեջ լի են ալ հատիկներ հյութալի: Ասե՛ք, տեսնեմ՝ինչ պտուղ է այն>>: Այսպիսով աշակերտները սովորում են խաղի լեզուն և ոճը:

Շուտասելուկ

Տարրական դասարաններում կարևոր նշանակություն ունեն շուտասելուկները: Այդ փոքրիկ բանաստեղծությունները կազմված են հատուկ ընտրված այնպիսի բառերով, որ դժվար լինի դրանց արտասանությունը: Շուտասելուկի ուսուցման նպատակն է՝ սովորեցնել արագ և հստակ արտաբերել այն արտահայտությունը, որը միտումնավոր կառուցված է արտասանության համար դժվար կառույցով:

Ուսուցչի կողմից շուտասելուկը ներկայացվելուց և համապատասխան վերլուծությունից հետո աշակերտները մի քանի անգամ ընթերցում են այն: Արագ ընթերցանությունից հետո նյութն անգիր սովորելուց հետոարագ արտաբեորում են սովորածը:

Օրինակ՝ Կար-չկար՝ մի գաճաճ արջ կար,

Այդ գաճաճ արջի աջ աչքը չկար:

Մի թաս կախիր գավազանից,

Ավազ հանիր ավազանից:

Մուկ գցեմ՝ ձուկ ուտեմ,

Ձուկ ուտեմ՝ մուկ գցեմ:

Եզրակացություն

Այսպիսով, կարևորում եմ այն փաստը, որ ժողովրդական բանահյուսության նմուշօրինակները նպաստում են իրականության հանդեպ փաստերն ու երևույթները ճիշտ ընկալելուն , ձևավորում են աշխարհայացք , ճաշակ, վարքի չափանիշներ:

Տարրական դասարաններում հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի ծանոթացումը սովորողների մեջ ձևավորում է ազգային մշակույթ, վարք ու բարք և բարոյական հատուկ հատկանիշների հիմքեր: Դրանով էլ ստեղծվում է դաստիարակչական գործունեության մի յուրօրինակ ուղեցույց: Ժողովրդական բանահյուսության նմուշ օրինակները էապես նպաստում են դպրոցականների մտահորիզոնի ընդլայմանը և մտավոր ունակությունների զարգացմանը: Զարգացնում են երեխայի մտածողությունը, դիտողականությունը, ամրապնդում հիշողությունը:

Առաջարկություն

- Բանահյուսության նմուշ օրինակներ կիրառել դասերի ժամանակ
- Հաճախակի կազմակերպել միջոցառումներ
- Կատարել շրջայց համայնքում, գրի առնել խոսք ու զրույց:

Օգտագործված գրականություն և հղումներ

1. Համացանց
2. <<Նախաշավիղ>> ամսագիր
3. Դասագրքեր,ձեռնարկներ և լեկցիաներ
4. <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիրի կայք https://www.mskh.am/
5. <<Դպիր>> մանկավարժական հանդես https://dpir.mskh.am/